



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսված 152,600,000 ՀՀ դրամից ուղղվել է 147,500,000 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով շուրջ 4000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների **տրամադրվել է 8979 աջակցություն:**

Տրամադրված աջակցության ուղղություն	2018թ. տրամադրված աջակցության քանակ
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	313
Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ	314
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	8010
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	64
Ոլորտային աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում	49
ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում	229
Ընդամենը	8979

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 3.9%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96.1%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 1144, Արարատի մարզում՝ 737, Արմավիրի մարզում՝ 520, Գեղարքունիքի մարզում՝ 602, Լոռու մարզում՝ 2040, Կոտայքի մարզում՝ 1106, Շիրակի մարզում՝ 615, Սյունիքի մարզում՝ 622, Վայոց Ձորի մարզում՝ 640, Տավուշի մարզում՝ 600, Երևան քաղաքում՝ 353 :

2018թ.-ի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքները, ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի, ներկայացված են ստորև.

1. ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ (*մանրանասները ներկայացված են 8-րդ բաժնում*):

Փետրվարի 8-12-ը ԱՄԷ Ռաս Ալ Խայմա էմիրությունում ղեկավար Շեյխ Սաուդ Բին Սաքր Ալ Քասիմի բարձր հովհանու ներքո անցկացվեց «Seaside Startup Summit UAE.Ras Al Khaimah» առաջին միջազգային սամմիթն, որին ներկա էր նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրենը: Առաջին միջազգային Սամմիթն ուներ նաև պետական աջակցություն Հայաստանից: Սամմիթից հետո Ռաս Ալ Խայմայի տնտեսական զարգացման դեպարտամենտում կայացած հանդիպման ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի տնօրենը և «Տնտեսական Զարգացման դեպարտամենտ»-ի տնօրենը ստորագրեցին համաձայնության հուշագիր, որով ձեռք բերվեցին պայմանավորվածություններ ակտիվացնել տնտեսական շփումները ՀՀ և Ռաս Ալ Խայմայի միջև, և հնարավորություններ ստեղծել Հայաստանում էմիրությունից ներդրողներ ներգրավելու համար:

Հաջորդ միջազգային սամմիթը տեղի ունեցավ մարտի 6-ից 11-ը Հնդկաստանի Գոա քաղաքում, իսկ «Սևան ստարտափ սամմիթ 2018»-ը անցկացվեց հուլիսի 22-ից 29-ը Սևանում: Նշված 2 միջոցառումների ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես է եկել որպես ծրագրերը գնահատող հանձնաժողովի անդամ:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման ուղղությամբ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են Ճապոնիայում, Միացյալ Էմիրություններում, Հնդկաստանում, Սինգապուրում, Միացյալ Թագավորություններում, Բելգիայում, Ռուսաստանում, Չինաստանում, Իսպանիայում կազմակերպված մի շարք դասընթացների, համաժողովների և հանդիպումների:

«Պեղական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պեղական բյուջեից գումար չի հատկացվել:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)

2.1 Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի նպատակն է մրցունակ ՓՄՁ-ների հիմնումը Հայաստանում: Ծրագիրը ներառում է ուսուցողական, մասնագիտական խորհրդատվության, տեղեկատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցության տրամադրման բաղադրիչներ: Մասնակցելով ծրագրին՝ սկսնակ գործարարները ստանում են բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ: Ծրագրի դասընթացային փուլի տևողությունը 1 ամիս է, որի ընթացքում փորձառու մասնագետների ուղղորդմամբ սկսնակ գործարարները նախ մշակում են իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո ձեռնամուխ են լինում դրանց իրականացմանը: Այս ծրագիրն ավելին է քան գործարար ծրագիր մշակելը, այն գործարար մտածողության և վարքագծի հիմնարար սկզբունքները սահմանող գործիքակազմ է: Ծրագիրը սկսվում է ձեռնարկատիրության հաջող մեկնարկի համար անհրաժեշտ հմտությունների զարգացմամբ և գիտելիքների փոխանցմամբ՝ գործարար ծրագրեր ներկայացնելու տրամաբանական ավարտով:

Գաղափարն իրագործելու ընթացքում գործարարները միայնակ չեն, դասընթացային փուլին հաջորդող 3 ամիսների ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի փորձագետները և բիզնես խորհրդատուները ուղեկցում են սկսնակ գործարարներին անհատական խորհրդատվությունների միջոցով և լրացուցիչ աջակցություն տրամադրում՝ կարիքներից ելնելով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և ընթացքի մեջ են գտնվում 16 ծրագրեր¹ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ, Շիրակի մարզի Գյումրի, Տավուշի մարզի Դիլիջան, Վայոց Ձորի մարզի Վայք, Կոտայքի մարզի Չարենցավան, Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան և Կապան, Արմավիրի մարզի Արմավիր և Վաղարշապատ, Լոռու մարզի Ալավերդի, Ստեփանավան և Վանաձոր քաղաքներում և Արմավիրի մարզի Լուկաշին համայնքում: Ընդհանուր, առմամբ նշված 16 վայրերում ծրագրերին մասնակցելու համար դիմել է 405 սկսնակ գործարար, որոնցից հարցազրույցների արդյունքում ընտրվել է 245 մասնակից, այդ թվում՝ 128-ը՝ կին, 117-ը՝ տղամարդ :

Մարզ քաղաք/գյուղ	Մասնակիցների թիվ	Դասընթացի սկիզբ/ավարտ	Ներկայացված գործարար ծրագրերի թիվ
---------------------	---------------------	--------------------------	---

¹ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ, Շիրակի մարզի Գյումրի, Տավուշի մարզի Դիլիջան, Վայոց Ձորի մարզի Վայք, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքներում ծրագրերն իրականացվել են ԱՄՆ ՄՁԳ-ի «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID PRP) համատեղ ծրագրի շրջանակներում:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան և Կապան, Արմավիրի մարզի Արմավիր և Վաղարշապատ, Լոռու մարզի Ալավերդի, Ստեփանավան և Վանաձոր քաղաքներում և Արմավիրի մարզի Լուկաշին համայնքում ծրագրերն իրականացվել են ԵՄ «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանում» ծրագրի շրջանակներում:

Արագածոտնի մարզ, Աշտարակ քաղաք	22	13.03.2018-24.04.2018	19
Շիրակ մարզ, Գյումրի քաղաք	17	12.03.2018-18.04.2018	16
Վայոց Ձորի մարզ, Վայք քաղաք	14	12.03.2018-19.04.2018	11
Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաք	15	15.03.2018-21.04.2018	11
Տավուշի մարզ, Դիլիջան քաղաք	17	19.03.2018-02.05.2018	14
Լոռու մարզ, Ալավերդի քաղաք	18	23.04.2018- 06.06.2018	8
Լոռու մարզ, Ստեփանավան քաղաք	13	21.06.2018-30.07.2018	8
Լոռու մարզ, Վանաձոր քաղաք	18	09.08.2018- 19.09.2018	13
Արմավիրի մարզ, Արմավիր քաղաք	15	26.04.2018-31.05.2018	13
Արմավիրի մարզ, Լուկաշին համայնք	19	15.05.2018-20.06.2018	16
Արմավիրի մարզ, Վաղարշապատ քաղաք	10	22.06.2018-23.07.2018	10
Սյունիքի մարզ, Գորիս քաղաք	18	14.05.2018-21.06.2018	12
Սյունիքի մարզ, Սիսիան քաղաք	12	12.06.2018-19.07.2018	9
Սյունիքի մարզ, Կապան քաղաք	10	25.07.2018-31.08.2018	8
Գեղարքունիքի մարզ, Սևան քաղաք	10	15.10.2018-15.11.2018	8
Արարատի մարզ, Արտաշատ քաղաք	17	02.10.2018-13.11.2018	12

Ծրագրի դասընթացային փուլին մասնակցելու արդյունքում 245 մասնակիցներից 188-ը կազմել են անհատական գործարար ծրագրեր և ներկայացրել գործարար ծրագրերի գնահատման աշխատանքային խմբին, որոնցից 96-ը գնահատվել են իրատեսական: Իրատեսական գնահատված 96 ծրագրերից 65-ը ընդգրկվել են «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն» ծրագրում:

Բացի այդ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության հետ համատեղ ՀՀ բոլոր մարզերում մեկնարկել է Աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական

գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ դասընթացներ: Դասընթացներին մասնակցում են հանրապետության բոլոր մարզերից ձեռնարկատիրական գործ սկսելու ցանկություն հայտնած շուրջ 68 սկսնակ գործարարներ: Դասընթացի ընթացքում մասնակիցները ստացել են անհրաժեշտ գիտելիքներ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու, իրենց ֆինանսները ճիշտ պլանավորելու և ձեռնարկատիրությունը ճիշտ կառավարելու ուղղությամբ, ինչպես նաև գործարար ծրագիրը կազմելու անհրաժեշտ խորհրդատվություն: Դասընթացի վերջում առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 50 շահառուները ֆինանսավորվել են Զբաղվածության պետական գործակալության կողմից՝ ստանալով դրամաշնորհ ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի համար :

Ընդհանուր առմամբ, 2018 թվականի ընթացքում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում պետական գրանցում են ստացել և սկսել ձեռնարկատիրական գործունեություն 117 սկսնակ գործարարներ, որոնք ապահովում են 159 աշխատատեղ: Գրանցվածներից 10-ը՝ 2017 թվականին իրականացված ծրագրերի մասնակիցներն են, իսկ 97-ը՝ 2018 թվականին:

2.2 ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակներում ս.թ. հունվար-օգոստոս ամիսներին կազմակերպվել է «Վաճառք և մարքեթինգ», «Հյուրընկալության ոլորտի կառավարում», «Թվային մարքեթինգ» և «Սննդի անվտանգություն և HACCP սկզբունքներ» թեմաներով 12 դասընթաց, որոնց մասնակցել են ՀՀ Լոռու, Սյունիքի և Արմավիրի մարզերի 210 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ :

«Վաճառք և մարքեթինգ» թեմայով դասընթացի ընթացքում ուսումնասիրվել են հետևյալ թեմաները. մարքեթինգի հիմունքները և դրանց գործնական կիրառությունը, վաճառքի և ապրանքի ներկայացման հմտությունները, արդյունավետ վաճառքի կազմակերպումը, սոցիալական մարքեթինգը:

«Հյուրընկալության ոլորտի կառավարում» թեմայով դասընթացի ընթացքում ուսումնասիրվել են հետևյալ թեմաները. հյուրընկալության արդյունավետ կառավարումը, ոլորտի կազմակերպման հիմնական սկզբունքներն ու ստանդարտները, սոցիալական մարքեթինգը:

«Թվային մարքեթինգ» թեմայով դասընթացի ընթացքում մասնակիցները ծանոթացել են թվային մարքեթինգի ռազմավարության մշակման հիմունքներին, մարքեթինգի ռազմավարության մեջ թվային տեխնոլոգիաների կիրառմանը, թվային մարքեթինգի գործիքներին և հնարավորություններին, համացանցում բիզնեսի ծավալմանը և առաջխաղացմանը, վեբ կայքի հնարավորությունների կիրառմանը, որոնողական համակարգերի հետ աշխատանքին, թվային մարքեթինգի արդյունավետության գնահատման գործիքներին և ամբողջ գործընթացի կառավարմանը:

«Սննդի անվտանգություն և HACCP սկզբունքներ» թեմայով դասընթացին ներկայացվեցին Հայաստանում սննդամթերքի անվտանգության կառավարման արդիական համակարգերը (GMP, GHP, ServSafe), սննդի արտադրության ոլորտին

ներկայացվող պահանջները, հիգիենայի հիմունքները, ՀՀ սննդամթերքի անվտանգությանն առնչվող իրավական դաշտը, ԵԱՏՄ սննդամթերքի անվտանգությանն առնչվող իրավական ակտերը, ինչպես նաև սննդամթերքի արտադրության բոլոր փուլերում վերահսկողություն ապահովող Վտանգների Վերլուծության և Հսկման Կրիտիկական Կետերի (HACCP) կառավարման համակարգը և նրա ներդրման հիմնական քայլերը:

«ՓՄՁ-երի գործունեության ծավալների ընդլայնում» ծրագրի շրջանակներում ս.թ. հունիսի 11-15-ը 15 ՓՄՁ-ների համար կազմակերպվել և անցկացվել է 5-օրյա դասընթաց՝ եվրոպական ստանդարտների և սերտիֆիկացման գործընթացի վերաբերյալ: Դասընթացներից հետո ընտրվել են 10 ՓՄՁ-ներ, որոնց տրամադրվել է անհատական խորհրդատվություն և մշակվել է գործողությունների անհատական պլան՝ ԵՄ շուկա մուտք գործելու համար:

ՁԵՑ Հայաստան ծրագրի շրջանակներում ս.թ. նոյեմբերի 5-9-ը Երևան քաղաքում կազմակերպվել է «Նորարարության կառավարում» թեմայով դասընթաց, որին մասնակցել են ՏՏ ոլորտի ՓՄՁ սուբյեկտների 18 ներկայացուցիչներ :

ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում ՀՀ Արագածոտնի, Տավուշի և Շիրակի մարզերում հյուրատնային գործունեությամբ զբաղվող գործարարների համար իրականացվել են “Հյուրատների կառավարում” և “Սառնարանային տնտեսությունների կառուցում և շահագործում” թեմաներով դասընթացներ, որոնց մասնակցել են 71 շահառու:

Ընդհանուր առմամբ ուսուցողական աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 627 սկսնակ գործարարներ և ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ, որոնցից 313-ը «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում:

Այլ ուսուցողական աջակցություն

Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակներում ս.թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ Լոռու և Սյունիքի մարզերում կազմակերպվել են «Հաճախորդների սպասարկում եւ հյուրընկալության կառավարում» և «Կարիերայի զարգացում» թեմաներով դասընթացներ տեղական աշխատուժի համար:

«Հաճախորդների սպասարկում և հյուրընկալության կառավարում» թեմայով դասընթացի ընթացքում ներկայացվել են հետևյալ հիմնական թեմաները. ոլորտի հիմնական ստանդարտները եւ մասնագիտությունները, ոլորտի մասնագետներին ներկայացվող պահանջները, արդյունավետ հաղորդակցման հմտություններն ու հաճախորդների սպասարկումը, հաճախորդների սպասարկման հմտությունները, սոցիալական մարքեթինգի հիմունքները:

«Կարիերայի զարգացում» թեմայով դասընթացի նպատակն էր տեղական աշխատուժի ներկայացուցիչներին ապահովել գործնական գիտելիքներով և հմտություններով, ինչը հնարավորություն կտա նրանց աշխատանք գտնել իրենց նախընտրած ոլորտներում և ընկերություններում: Դասընթացի ընթացքում քննարկված և ներկայացված հիմնական թեմաներն էին. սեփական կարողությունների գնահատում, մոտիվացիա, ներկայացման հմտություններ և արդյունավետ բանակցությունների վարում, արդյունավետ ինքնաներկայացում և ինքնակենսագրականի պատրաստում, աշխատանքային հարցազրույցին արդյունավետ նախապատրաստում:

Հունվարի 22-23-ը Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կազմակերպվել է «Հաճախորդների սպասարկում և հյուրընկալության կառավարում» թեմայով դասընթաց, որին մասնակցել են տեղական աշխատուժի 21 ներկայացուցիչներ, ովքեր նպատակ ունեին բարելավել իրենց գիտելիքները նշված ոլորտում, ինչպես նաև նրանք, ովքեր ցանկանում են աշխատանքի անցնել հյուրընկալության ոլորտի ընկերություններում:

Հունվարի 24-25-ը Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կազմակերպվել է «Կարիերայի զարգացում» թեմայով դասընթաց տեղական աշխատուժի համար, որին մասնակցել են հիմնականում երիտասարդ աշխատուժի 26 ներկայացուցիչներ:

Փետրվարի 2-3-ը Սյունիքի մարզի Գորիս քաղաքում կազմակերպված «Հաճախորդների սպասարկում և հյուրընկալության կառավարում» թեմայով դասընթացին մասնակցել են տեղական աշխատուժի 15 ներկայացուցիչներ, իսկ փետրվարի 4-5-ը կազմակերպված «Կարիերայի զարգացում» թեմայով դասընթացին մասնակցել են երիտասարդ աշխատուժի 10 ներկայացուցիչներ:

Ս.թ. օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 25-ը կազմակերպվել է դասընթացների երկրորդ շարքը տեղական աշխատուժի համար: ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Արմավիրի մարզի Արմավիր և Լոռու մարզի Վանաձոր և Ստեփանավան քաղաքներում կազմակերպվել է «Կարիերայի զարգացում» և «Հաճախորդների սպասարկում և հաղորդակցության հմտություններ» թեմաներով 6 դասընթաց, որոնց մասնակցել են տեղական աշխատուժի 112 ներկայացուցիչներ, որոնք, ձեռքբերելով գործնական գիտելիքներ և համապատասխան ունակություններ, հետագայում կարող են հեշտությամբ աշխատանք գտնել իրենց կողմից նախընտրած ոլորտներում:

Բացի այդ, դասընթացների ավարտին տրամադրվել է հետդասընթացային խորհրդատվություն անմիջապես բիզնեսի գործունեության վայրում:

«Պեպական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պեպական բյուջեից գումար չի հատկացվել:

3. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով շուրջ շուրջ 3800 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 8010 անգամ աջակցություն:

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կենտրոնական և մարզային գրասենյակները շարունակել են ծառայել ՓՄՁ սուբյեկտների համար որպես *Աջակցության Կենտրոններ*, որոնց միջոցով ՓՄՁ-ի սուբյեկտները հնարավորություն ունեն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի մասնագետների օգնությամբ պատրաստել և ՀՀ հարկային մարմիններ ներկայացնել իրենց էլեկտրոնային հաշվետվությունները, հաշվարկները և այլ հաշվարկային փաստաթղթերը: Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ շուրջ 400 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 1000 աջակցություն:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA) ծրագրի աջակցությամբ ս.թ.փետրվարի 17-18-ը Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կենտրոնական և մարզային մասնաճյուղերի աշխատակիցների համար կազմակերպվեց երկօրյա վերապատրաստման դասընթաց ՀՀ հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Դասընթացը վարում էր ոլորտի առաջատար մասնագետներից մեկը: Ներկա էին նաև ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներկայացուցիչներ: Դասընթացի ընթացքում քննարկվեցին ՀՀ հարկային օրենսգրքի առանձնահատկությունները, ՀՀ հարկային օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունները՝ ներառյալ մինչև փետրվարի 1-ը օրենսգրքի հիման վրա ընդունված ենթաօրենսդրական իրավական ակտերը, հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների ազդեցությունը ՓՄՁ սուբյեկտների գործունեության վրա:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ՓՄՁ սուբյեկտների համար իրականացվել են ՀՀ հարկային օրենսգրքի վերաբերյալ 9 իրազեկման սեմինար-խորհրդատվություններ, որոնց մասնակցել են 279 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ: Հանդիպումներն անց են կացվել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Գործարարության աջակցության գրասենյակի ներկայացուցիչների հետ համատեղ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են ՀՀ հարկային օրենսդրության վերջին փոփոխությունները, մասնավորապես հանրային սննդի ոլորտում կատարված վերջին փոփոխություններ, ինչպես նաև հավաքագրվել են բիզնեսին վերաբերող բոլոր խնդրահարույց հարցերը, որոնք ամփոփ տեսքով ներկայացվել են համապատասխան իրավասու մարմիններին :

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամը ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդի անվտանգության պետական տեսչության հետ համատեղ ս.թ. դեկտեմբերի 20 և 21-ին ՀՀ բոլոր մարզերում իրականացրել է 10 իրազեկման միջոցառումներ սնունդ արտադրող ՓՄՁ սուբյեկտների շրջանում Սննդի անվտանգության «Վտանգի

վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (այսուհետ՝ HACCP) համակարգ»-ի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև 2023 թվականը բոլոր սնունդ արտադրող կազմակերպություններում փուլ առ փուլ պետք է ներդրվի այս համակարգը՝ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից հաջորդ տարվա ընթացքում այս ուղղությամբ կշարունակվեն իրականացվել իրազեկման միջոցառումները :

Բացի այդ, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից Գյումրի և Վանաձոր քաղաքներում իրականացվել են իրազեկումներ ՓՄՁ միջազգայնացման գործիքները, այդ թվում՝ առևտրի արտահանման պորտալն ու GSP+ գործող արտոնությունները և REX համակարգը ՓՄՁ սուբյեկտներին հասանելի դարձնելու համար: Միջոցառումներն իրականացվել են Հայաստանում ԵՄ պատվիրակության, Գերմանական բիզնես ասոցիացիայի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Հայաստանի արտահանման ապահովագրության գործակալության հետ համատեղ

:

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ աշխատանք է տարվել կենտրոնի գործունեությունը լուսաբանելու նպատակով: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը, բացի ընթացիկ նորություններից, իր կայքում պարբերաբար տեղադրում է իր շահառուների հաջողության պատմությունները, ծրագրերի և Կենտրոնի գործունեությանն առնչվող հայտարարություններ, սպասվող իրադարձությունների տեղեկություններ: Բացի այդ, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը երկու խոշոր միջազգային ցուցահանդեսներին՝ Foodex Japan 2018 և Food and Hotel Asia 2018 (Սինգապուր) մասնակցող ձեռնարկությունների համար պատրաստել և ցուցահանդեսների կազմակերպիչներին է ներկայացրել վերջիններիս մասին պատմող մամուլի հաղորդագրությունները, հաջողության պատմությունները:

Լայնորեն լուսաբանվել է Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Հայաստանից ժամանած 3 արտադրողների մասնակցությունը Foodex Japan և Food and Hotel Asia 2018 (Սինգապուր) միջազգային ցուցահանդեսներին: Կենտրոնի տարածած մամուլի հաղորդագրությունը տեղադրել են մեկ տասնյակից ավելի կայքեր, հատուկ ռեպորտաժներ են պատրաստել Հանրային և Արմենիա հեռուստաընկերությունները:

Ապրիլից վերսկսվել է Հայկական երկրորդ հեռուստաընկերությամբ հեռարձակվող ամենամսյա ծրագրերի թողարկումը: Այն հեռարձակվում է յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը: Յուրաքանչյուր ծրագրի ընթացքում ներկայացվում են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի շահառուների հաջողության պատմությունները որևէ մարզից, ինչպես նաև տվյալ ամսվա ընթացքում տեղի ունեցած միջոցառումների մասին պատմող ռեպորտաժներ: Հաշվետու ժամանակահատվածում թողարկվել է ՓՄՁ ՋԱԿ-ի գործունեության մասին պատվող 10 հեռուստահաղորդում: Հեռարձակումից հետո բոլոր թողարկումները տեղադրվել են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի Յութուբյան ալիքում և տարածվել հիմնադրամի կայքում, ինչպես նաև սոցիալական ցանցերում:

«Արմենպրես» գործակալության հետ արդյունավետ գործընկերության հիման վրա Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի հասարակության հետ կապերի բաժինը գործակալությանն է տրամադրում իրադարձությունների մասին պատմող տեղեկություն, որը հայտնվում է գործակալության կայքում և տարածվում մյուս լրատվամիջոցներին:

Համագործակցության պայմանագիր է կնքվել նաև news.am կայքի հետ, որի հիման վրա կայքում պարբերաբար տեղադրվելու են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասին պատմող հաղորդագրությունները:

Շարունակում է ակտիվորեն գործել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆեյսբուքյան էջը: Այն օգնում է երկխոսություն ծավալել շահառուների և կենտրոնի միջև: Էջում պարտադիր տարածվում են ՓՄՁ ԶԱԿ-ի նորությունները, պարբերաբար տեղադրվում ՓՄՁ ոլորտին առնչվող լուրեր այլ կայքերից, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության՝ ՓՄՁ ոլորտին առնչվող նորությունները, կառավարության, ԱԺ, միջազգային գործընկեր կազմակերպությունների նորությունները, որոնք վերաբերում են ՓՄՁ ոլորտին, հարկային կարգավորումներին և ՓՄՁ-ներին հետաքրքրող այլ թեմաների: Էջում պարբերաբար ստեղծվում և տարածվում են ֆոտոալբոմներ, որոնք ներկայացնում են ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցառումները կամ այն միջոցառումները, որոնք մասնակցում են ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցիչները: Էջը նաև արդյունավետ հարթակ է, որի միջոցով բաժանորդագրված օգտատերերը և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեությամբ հետաքրքրվողները կարողանում են օպերատիվ կերպով ստանալ իրենց հետաքրքրող տեղեկությունները:

Ֆեյսբուքին զուգահեռ և կենտրոնի ֆեյսբուքյան էջի հետ համընթաց (սինխրոնացված) գործում է նաև կենտրոնի էջը twitter, linked in սոցիալական ցանցերում: Ֆեյսբուք սոցիալական ցանցում տեղադրված գրառումները, ֆոտոալբոմները, տեսանյութերն ավտոմատ կերպով հայտնվում են նաև twitter սոցցանցի մեր էջում: Յուրաքանչյուր սոցիալական ցանցում կենտրոնը 2012 թ.-ից սկսած՝ տեղադրում և ներբեռնում է իր գործունեության հետ կապ ունեցող տեսանյութերը, հեռուստատեսային ծրագրերը, շահառուների հաջողության պատմությունները:

«Պեղական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պեղական բյուջեից գումար չի հարկացվել:

4. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

4.1 ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական աջակցություն (Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների ցրամադրում)

2018 թվականի ընթացքում «Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների տրամադրում» ծրագրի շրջանակներում գործող 5 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 48,3 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովելով 72,4 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Երաշխավորություն ստացած ՓՄՁ սուբյեկտները

գործունեություն են ծավալում ՀՀ Տավուշի, Շիրակի մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 14,4 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 9,6 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 12%: Վարկային պարտավորությունների երաշխիքով միջին ապահովվածությունը կազմել է 67%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջոցով :

4.2 Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)

2018 թվականի ընթացքում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն են ստացել 56 սկսնակ գործարարներ: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 222.3 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 228.7 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով :

Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 4.1 մլն ՀՀ դրամ, ստացված վարկային միջոցների միջին գումարը՝ 4.0 մլն ՀՀ դրամ:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի

Մարզ	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Գեղարքունիք	5	15,426,850	15,881,818
Վայոց Ձոր	1	3,000,000	3,087,415
Արագածոտն	6	34,815,000	35,807,254
Լոռի	8	26,852,480	27,639,251
Շիրակ	5	28,140,000	28,947,901
Տավուշ	6	19,175,000	19,685,342
Արմավիր	15	51,013,000	52,483,570
Արարատ	1	5,000,000	5,142,504
Սյունիք	9	38,938,000	40,047,762
Ընդամենը	56	222,360,330	228,722,817

4.3 Գործարար նախաձեռնություններին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)

2018 թվականի ընթացքում «Գործարար նախաձեռնությունների աջակցություն» ծրագրի շրջանակներում 3 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 83,3 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովելով 75,0 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Երաշխավորություն ստացած ՓՄՁ սուբյեկտները գործունեություն են ծավալում ՀՀ Արագածոտնի մարզում և Երևան քաղաքում:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 25 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 27,7 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 12%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջոցով:

Ընդհանուր առմամբ, ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 64 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:

«Պեղական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրով «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պեղական բյուջեից գումար չի հատկացվել:

5. Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ծրագրի գերակա ոլորտներում (ջերմոցային և սառնարանային տնտեսություններ, հյուրատնային գործունեություն, պանրի, չրերի, պահածոների և մսամթերքի արտադրություն) տրամադրվող տեխնոլոգիական աջակցության շրջանակում իրականացվել են «Հյուրատների կառավարում» թեմայով մեկական դասընթացներ ՀՀ Շիրակի, Տավուշի, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում գործող սկսնակ հյուրատների համար, ինչպես նաև «Սառնարանային տնտեսությունների կառուցում և շահագործում» թեմայով դասընթաց ՀՀ Արմավիրի մարզում գործող սկսնակ գործարարների համար: Դասընթացներին մասնակցել են 71 շահառու :

Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում՝ նյութեր և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով: Դրամաշնորհները տրամադրվում են համաձայն հաստատված ընթացակարգի: Դրամաշնորհի կարող են հավակնել Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրին մասնակցած, ոլորտային աջակցության ծրագրերի կողմից խրախուսվող ոլորտներից որևէ մեկին համապատասխան առավել իրատեսական գործարար ծրագրեր մշակած և ներկայացրած,

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված անհատ ձեռնարկատերերն ու իրավաբանական անձինք: Հաշվետու ժամանակահատվածում 49 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է դրամաշնորհ սարքավորումների տեսքով: Դրամաշնորհներից 25-ը տրամադրվել են ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացնող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակներում, իսկ 24-ը՝ ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիր :

Հաշվետու ժամանակահատվածում **իրականացված և իրականացվող ենթակառուցվածքային ծրագրեր.**

- Տավուշի մարզի Աչաջուր համայնքում գինեգործական-ուսումնասարտադրական կենտրոնի վերակառուցում:
- Արագածոտնի մարզի Ավան գյուղական համայնքի ջրամատակարարման ցանցի վերակառուցում:
- Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի ոռոգման ցանցի կառուցում:
- Կալավան համայնքում տուրիստական կենտրոնի կառուցում:
- Ազատան համայնքում առկա սերմնազտիչ կայանի վերազինում՝ նոր սարքավորումներով:
- Իրականացման փուլում է գտնվում Կողբ համայնքում գործող պտուղների և հատապտուղների վերամշակման արտադրամասի՝ նոր գոլորշու կաթսայով վերազինման ծրագիրը:

Ընդհանուր առմամբ իրականացվել և իրականացման փուլում է 6 ենթակառուցվածքային ծրագիր, 71 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների համար կազմակերպվել են տեխնոլոգիական դասընթացներ, դրամաշնորհ են ստացել 49 ձեռնարկատերեր:

«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրով «Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

6. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցությունը և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովումն իրականացվում է հիմնականում Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում, ինչպես նաև ՓՄՁ միջազգայնացմանն ուղղված այլ միջոցառումների շրջանակներում: Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ում աջակցության ծրագրային նոր ուղղություն ձևավորելու համար:

ա) ՓՄՁ միջազգայնացմանն աջակցություն Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցը (ՁԵՑ) եվրոպական նախաձեռնություն է, որի նպատակն է գործարարությանն ու նորարարությանն ուղղված աջակցություն տրամադրել ձեռնարկություններին Եվրոպայում և Եվրոպայից դուրս: ՁԵՑ-ի ընդհանուր համակարգումն իրականացվում է Եվրոպական Հանձնաժողովի ՓՄՁ հարցերով գործադիր գործակալության (EASME) կողմից:

ՁԵՑ-ի գործունեությունը Հայաստանում իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի (համակարգող) և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (գործընկեր) կողմից: Հայկական կոնսորցիումը նշված EASME գործակալության հետ ստորագրել է շրջանակային համաձայնագիր 2015-2020թթ. համար: Սկսած 2016թ. ՁԵՑ-ի աշխատանքները Հայաստանում համաֆինանսավորվում են Եվրոպական Հանձնաժողովի կողմից՝ COSME ծրագրին Հայաստանի անդամակցության շնորհիվ: Մրցույթին մասնակցության արդյունքում, 2017-2018 թվականների համար, կնքվել են ՁԵՑ Հայաստան և Հորիզոն 2020 ծրագրերի համաձայնագրերը:

2015-2020թթ. համար կնքված շրջանակային համաձայնագրի շրջանակներում, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել է 2019թ. համար հայտարարված մրցույթին և ներկայացրել ՁԵՑ Հայաստան և Հորիզոն 2020 աշխատանքային ծրագրերը:

Այս տարի Ձեռնարկությունների եվրոպական ցանցի 10-րդ տարեդարձի կապակցությամբ կազմակերպվել է հատուկ մրցանակաբաշխություն, որը անց է կացվում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի ծառայություններից օգտված ավելի քան 35 երկրներից ներկայացված ՓՄՁ-ների միջև: Ներկայացված 35 հաջողված պատմություններից նախընտրությունը տրվել է 10 ընկերությունների, որոնց ցանկում է նաև հայկական "Մեյիո Գրուպ" ընկերությունը:

Կնքված համագործակցության համաձայնագրեր.

Հաշվետու ժամանակահատվածում կնքվել է 8 համագործակցության համաձայնագիր: Կնքված համաձայնագրի հակիրճ նկարագրությունը ներկայացված է ստորև.

- Չեխական արտադրության հակասնկային կոսմետիկ միջոցի ներմուծում Հայաստան,
- Իսպանական գյուղատնտեսական արտադրանքի կատալոնական կլաստերի հետ համագործակցությամբ ՓՄՁ-ների և եվրոպական կլաստերների միջև նորարարության և գիտահետազոտական ծրագրերի մշակում՝ գյուղատնտեսական արտադրանքի մշակման ոլորտում,
- Մալթայից SS ընկերության պատվերով լրացված իրականության ոլորտում ծրագրերի մշակում,
- Հայկական արտադրության չոր թեյերի արտահանում Գերմանիա,
- Հայկական արտադրության չոր ուրցի արտահանում Գերմանիա,
- Հայկական արտադրության չորացրած բույսերի արտահանում Գերմանիա,
- Իսպանական արտադրության սննդային հավելումների ներմուծում,
- Տեխնոլոգիական համագործակցություն հայկական և ռուսական ընկերությունների միջև՝ բջջային հավելվածի մշակման նազավառում:

Հաշվետու ժամանակահատվածում կնքվել է նաև մեկ համագործակցություն՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում: Համագործակցությունը վերաբերում է խորհրդատվության տրամադրմանը՝ Հորիզոն 2020 ծրագրի ներքո ՓՄՁ գործիքի ֆինանսավորմանը դիմելու ընթացակարգերի, հայտադիմումի էլեկտրոնային ներկայացման և այլնի վերաբերյալ: Խորհրդատվության արդյունքում հայկական ընկերությունը դիմել է ՓՄՁ գործիքի ֆինանսավորմանը և ստացել ֆինանսավորում:

Գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ.

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես է եկել որպես ս.թ.փետրվարի 13-16-ը Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում տեղի ունեցած BioFach 2018 ցուցահանդեսի շրջանակներում գործարար համագործակցության հաստատման միջոցառումների կազմակերպիչ: Միջոցառման համակազմակերպիչ է հանդես եկել ՁԵՑ գործընկեր՝ Բավարիայի առևտրաարդյունաբերական պալատը: «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» ծրագրի աջակցությամբ օրգանական սնունդ արտադրող 10 հայկական ընկերություններ մասնակցեցին ցուցահանդեսին և ներկայացրեցին իրենց արտադրանքը ցուցահանդեսի այցելուներին: Հայկական ընկերությունները հնարավորություն ունեցան ոչ միայն ցուցադրել իրենց օրգանական արտադրանքը, այլև ունեցան ավելի քան 160 հանդիպում ինչպես գերմանական, այնպես և այլ երկրներից ցուցահանդեսի այցելու ընկերությունների հետ: Հայ գործարարները կապեր հաստատեցին ավելի քան 45 արտասահմանյան ընկերությունների հետ: Արդյունքում, կնքվել են 2 համաձայնագրեր հայկական թեյերը Գերմանիա արտահանելու վերաբերյալ:

Ս.թ. մարտի 6-9-ը Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում կայացավ FOODEX JAPAN ամենամյա ցուցահանդեսը, որը հանդիսանում է Ասիայի ամենախոշոր ցուցահանդեսներից մեկը և նվիրված է Ճապոնիայի և ամբողջ աշխարհի սննդի ու խմիչքի ցուցադրությանը: Հայաստանի ՓՄՁ Զարգացման ազգային կենտրոնը, «Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան» ծրագրի շրջանակներում կազմակերպել էր գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ (B2B)՝ FOODEX JAPAN 2018 ցուցահանդեսի հայկական 8 մասնակից ընկերությունների համար: Հայկական ընկերությունները հնարավորություն ունեցան ոչ միայն ցուցադրելու իրենց արտադրանքը, այլև ունեցան ավելի քան 150 հանդիպում ինչպես ճապոնական, այնպես էլ այլ երկրներից ցուցահանդես այցելած ընկերությունների ներկայացուցիչների հետ: Հայ գործարարները կապեր հաստատեցին ավելի քան 80 արտասահմանյան ընկերությունների հետ: Ներկայումս ստացվել է 10 գործնական առաջարկ՝ հայկական արտադրանքը Ճապոնիա և այլ երկրներ արտահանելու վերաբերյալ, որոնց շուրջ ընթանում են բանակցություններ: Միջոցառման համակազմակերպիչ էր հանդիսանում Ճապոնիայում ՁԵՑ գործընկեր՝ ԵՄ-Ճապոնիա արդյունաբերական համագործակցության կենտրոնը:

Ս.թ. ապրիլի 12-ին Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցան գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ՝ Ժնև մեկնած հայկական 22 ընկերությունների և շվեյցարական ընկերությունների միջև: Միջոցառումը նախաձեռնել էր Ժնև Կանտոնի Առևտրաարդյունաբերական պալատը (CCIG): Միջոցառումը համակազմակերպվել էր շվեյցարական գործընկեր Euresearch կազմակերպության կողմից:

Ս.թ. ապրիլի 16-17-ը գործարար առաքելությամբ Հայաստան էին ժամանել լիտվական ընկերություններ, որոնք ներկայացնում էին տեքստիլի և դեղորայքի ոլորտները: Հայկական

ընկերությունները մասնակցեցին այս առաքելության շրջանակներում կազմակերպված գործարար համագործակցության հաստատման միջոցառումներին: Արդյունքում, ներկայումս բանակցություններ են ընթանում լիտվական ներքնազգեստներ արտադրող ընկերության և հայկական ներմուծող ընկերության միջև:

Ս.թ. ապրիլի 22-23-ը Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք Լոնդոնում տեղի ունեցավ NOPE 2018 ցուցահանդեսը: Ավստրիական զարգացման գործակալության կողմից Հայաստանում իրականացվող «Աջակցություն օրգանական Հայաստան նախաձեռնությանը» ծրագրի նախաձեռնությամբ, օրգանական արտադրության ոլորտում ընդգրկված 13 հայկական ընկերություններ մասնակցեցին նշված ցուցահանդեսին: Այս ցուցահանդեսի շրջանակներում ևս ՁԵՑ Հայաստան ծրագրի շրջանակներում կազմակերպվեցին գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ: Հայկական ընկերություններն ունեցան ավելի քան 340 հանդիպում:

Ս.թ. հոկտեմբերի 21-24-ը Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացավ «ՄԻԱԼ 2018» ցուցահանդեսը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հետ համագործակցությամբ համատեղ ծրագիր իրականացնող Միջազգային առևտրային կենտրոնի (ITC) նախաձեռնությամբ սննդի արտադրության ոլորտում գործող հայկական 8 ընկերություններ մասնակցեցին նշված ցուցահանդեսին: Այս ցուցահանդեսի շրջանակներում ՁԵՑ Հայաստան ծրագրի աջակցությամբ կազմակերպվեցին գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ: Հայկական ընկերություններն ունեցան շուրջ 200 հանդիպումներ:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՁԵՑ Հայաստան ծրագրի շրջանակներում կազմակերպվել/համակազմակերպվել են 6 գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ, որոնց մասնակցել են 63 ՓՄՁ-ների ներկայացուցիչներ:

Իրազեկման միջոցառումներ.

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են նաև ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացմանն ու մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես.

- ս.թ. հունիսի 8-ին ՀՀ Լոռու մարզի Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է տեղեկատվական միջոցառում, որի ընթացքում ներկայացվել են ոչ միայն ՁԵՑ գործիքները, այլև Հորիզոն 2020 և ՓՄՁ գործիք ծրագրերը, Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար ծրագիրը, գերմանական բիզնես ասոցիացիայի, Հայաստանի արտահանման ապահովագրության գործակալության կողմից իրականացվող ծրագրերն ու աջակցող գործիքները, ինչպես նաև առևտրի արտահանման պորտալն ու GSP+ գործող արտոնությունները և REX համակարգը: Նշված միջոցառմանն ապահովվել է 28 ՓՄՁ սուբյեկտների և գործարար աջակցություն տրամադրող կառույցների, ինչպես նաև տարածքային կառավարմանն ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությունը: Ընդ որում, նշված 28-ից 13-ը ՓՄՁ-ների ներկայացուցիչներ են:
- ս.թ. հունիսի 15-ին Երևան քաղաքում, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող մեկ այլ՝ «ՓՄՁ-երի գործունեության ծավալների ընդլայնում» ծրագրի շրջանակներում

կազմակերպված դասընթացի ընթացքում ևս տեղի է ունեցել ՁԵՑ իրազեկման միջոցառում: Նշված միջոցառմանը մասնակցել են 18 ՓՄՁ-ների ներկայացուցիչներ:

- *ա.թ.* նոյեմբերի 7-ին Երևան քաղաքում, ՁԵՑ ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կազմակերպված «Նորարարության կառավարում» թեմայով դասընթացի ընթացքում ևս 18 մասնակիցներին ներկայացվեցին ՁԵՑ ծառայությունները:
- *ա.թ.* նոյեմբերի 8-ին Գյումրի քաղաքում ևս տեղի ունեցավ իրազեկման միջոցառում: Միջոցառման ընթացքում 20 մասնակիցներին ներկայացվեցին ոչ միայն ՁԵՑ ծառայություններն ու գործիքները, այլ նաև Հորիզոն 2020 և ՓՄՁ գործիք ծրագրերը, Էրասմուս Երիտասարդ ձեռնարկատերերի համար ծրագիրը, գերմանական բիզնես ասոցիացիայի, Հայաստանի արտասահմանյան ապահովագրության գործակալության կողմից իրականացվող ծրագրերն ու աջակցող գործիքները, ինչպես նաև առևտրի արտասահմանյան պորտալն ու GSP+ գործող արտոնությունները և REX համակարգը:
- *ա.թ.* դեկտեմբերի 17-21-ը Երևան քաղաքում կազմակերպված «Սննդի վերամշակման ոլորտի հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացման ստանդարտների և անհրաժեշտ միջազգային սերտիֆիկատների ձեռքբերման վերաբերյալ» դասընթացավարների համար դասընթացի ընթացքում ևս գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների 15 ներկայացուցիչներին ևս ներկայացվել են ՁԵՑ ծառայությունները: Դասընթացի ընթացքում մասնագետներին ներկայացվել են ԵՄ պահանջները սննդամթերքի ներմուծման վերաբերյալ, աջակցության գործիքները, սննդի անվտանգության կառավարման համակարգերը և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված 5 տեղեկատվական միջոցառումներին մասնակցել են ընդհանուր առմամբ 99 ներկայացուցիչներ ՓՄՁ-ներից ու գործարար աջակցություն տրամադրող կառույցներից, որոնցից 69-ը ՓՄՁ-ների ներկայացուցիչներ են:

Ուղեկցման ծառայություններ

Ա.թ. նոյեմբերի 5-8-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՁԵՑ ծրագրի շրջանակներում կազմակերպել էր մենթորային ծրագիր՝ նախատեսված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների համար: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Գևորգ Պողոսյանը ծրագրի 11 ընկերությունների 21 ներկայացուցիչների ներկայացրեց նորարարության կառավարումը՝ գաղափարի հաստատումից մինչև ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը: Ծրագրի մասնակից ընկերություններից որոշակի չափանիշներից ելնելով ընտրվեցին 5-ը, որոնց կտրամադրվեն անհատականացված ծառայություններ՝ ուղղված ընկերության նորարարության կառավարման ուժեղացմանը: Մասնավորապես, այս ընկերությունների համար կմշակվեն անհատական ճանապարհային քարտեզներ՝ ընկերության ներսում նորարարությունը կառավարելու նպատակով:

Մեկ այլ ծրագրով իրականացվել է վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրում՝ բուսական թեյերի արտադրությամբ զբաղվող 4 հայկական ընկերություններում:

Աջակցության հիմնական գործիքն է.

- Մենթորինգ՝ «Վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի» (HACCP) ներդրման վերաբերյալ,
- Ուղեկցում՝ «Վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի» (HACCP) ներդրման ուղղությամբ,

- «Վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի» (HACCP) ներդնում (առանց սերտիֆիկացման):

ՁԵՑ Տեղեկատվական նյութեր.

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և գործարարների շրջանում տարածվել է Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային նորությունների ամսական տեղեկաթերթի 12 նոր համար՝ անգլերեն և հայերեն լեզուներով, որոնց հասցեատերերի քանակը գերազանցում է 3000-ը: Տեղեկաթերթը պարունակում է տեղեկատվություն հաղորդակցման կենտրոնի գործունեության, գործարար և տեխնոլոգիական համագործակցության առաջարկների/հարցումների, գիտահետազոտական հարցումների, ինչպես նաև արտերկրում նախատեսվող գործարար միջոցառումների վերաբերյալ: Բացի այդ, մշակվել և հայ գործարարների շրջանում տարածվել է նաև «Միջազգային գործարար համագործակցության միջոցառումներ» խորագրով տեղեկաթերթի 4 համար, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն արտերկրներում տեղի ունեցող միջոցառումների մասին: Այս տեղեկաթերթի հասցեատերերի քանակը ևս գերազանցում է 3000-ը:

Հաշվետու ժամանակահատվածի ամփոփ տվյալներ.

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի գործունեության շրջանակներում 2018 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, բիզնեսի միջազգայնացմանն ուղղված 408 տարաբնույթ ծառայություններ են մատուցվել 229 ՓՄՁ սուբյեկտների, այդ թվում՝ 29 ՓՄՁ սուբյեկտների գործարար նկարագրեր տեղադրվել են ՁԵՑ-ում, 8 ՓՄՁ սուբյեկտ կնքել է համագործակցության համաձայնագիր, 1 ՓՄՁ սուբյեկտ կնքել է համագործակցություն՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում, 191 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել են տարբեր տեսակի աջակցություններ, այդ թվում՝ տեղադրվել են հարցումներ ՁԵՑ-ում, ուղարկվել են հետաքրքրության առաջարկներ և ստացված կոնտակտները ներկայացվել են տեղական ընկերություններին, ստացվել են հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները, մասնակցել են ՁԵՑ շրջանակներում կազմակերպված գործարար հանդիպումներին, մասնակցել են տեղական իրազեկման միջոցառումներին, տրամադրվել է նորարարության կառավարման գնահատման ծառայություն, ինչպես նաև ստացել են անհատական խորհրդատվություն:

բ) ՓՄՁ-երի գործունեության ծավալների ընդլայնում

ՓՄՁ-երի գործունեության ծավալների ընդլայնում (Scaling up for grow) ծրագիրը ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որն իրականացվում է Ձեռնարկությունների Եվրոպական ցանցին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի անդամակցության շրջանակներում: Ծրագիրը մեկնարկել է 2017թ. սեպտեմբերի 1-ին և տևելու է 1 տարի: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել սննդի վերամշակման ոլորտում գործող տեղական ՓՄՁ-ներին դեպի միջազգային շուկա առաջնդման հարցում: Աջակցության հիմնական գործիքներն են՝

- թեմատիկ դասընթացներ
- անհատական խորհրդատվություն

- ՁԵՑ-ի (Ձեռնարկությունների եվրոպական ցանց) գործիքների միջոցով նոր միջազգային գործընկերների որոնում:

Որպես թիրախային խմբեր ընտրված են սկսնակ (մինչև 5 տարի գործող) ՓՄՁ-ներ, որոնք գործում են սննդի վերամշակման ոլորտում:

Ակնկալվող արդյունքներն են՝

- Ծրագրի ավարտին միջազգային շուկա դուրս գալու համար անհրաժեշտ ամբողջ գործընթացին, այդ թվում՝ անհրաժեշտ սերտիֆիկացման ստանդարտներին լավատեղյակ վերապատրաստված սկսնակ 15 ՓՄՁ-ներ,
- Ծրագրի ավարտին փորձագետների կողմից սեփական արտադրանքի միջազգայնացման վերաբերյալ անհատական խորհրդատվություն ստացած 10 ՓՄՁ-ներ,
- Ծրագրի ավարտին Միջազգային ստանդարտներին համապատասխան սերտիֆիկացում անցած և սեփական արտադրանքը արտահանելուն պատրաստ 5 ՓՄՁ-ներ:
- Հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացման համար անհրաժեշտ գործողությունների և ընթացակարգերի վերաբերյալ ճանապարհային քարտեզ՝ մշակված նախապես անցկացված դասընթացների և խորհրդատվության արդյունքների հիման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում ամփոփվել է մասնակիցների նախնական ցուցակը: Կազմվել է ծրագրի փորձագետի տեխնիկական բնութագիրը: Հայտարարվել է մրցույթ, որին մասնակցության հայտ են ներկայացրել երկու խորհրդատվական կազմակերպություն: Մրցույթում հաղթել է «Ինթեգրեյթիդ մենեջմենթ սլուշնգ» ՍՊԸ-ն, որը առավելագույնս համապատասխանել է հայտարարված մրցույթում առաջադրված պայմաններին: Կատարվել է ծրագրի մասնակիցների նախնական հավաքագրում՝ ըստ նախապես կազմված ցանկի:

Հաշվետու ժամանակահատվածում «Ինթեգրեյթիդ մենեջմենթ սլուշնգ» խորհրդատվական ընկերության փորձագետների հետ միասին 30 ՓՄՁ-ներից ընտրվել են 15-ը, որոնք այցելությունների և անցկացված հարցազրույցների արդյունքում ցուցաբերել են առավելագույն պատրաստվածություն և պատրաստակամություն մուտք գործել եվրոպական շուկա: Ընտրված 15 ՓՄՁ-ների համար ս.թ. հունիսի 11-15-ը կազմակերպվել և անցկացվել են 5-օրյա դասընթացներ՝ եվրոպական ստանդարտների և սերտիֆիկացման գործընթացի վերաբերյալ: Դասընթացներից հետո ընտրվել են 10 ՓՄՁ-ներ, որոնց տրամադրվել է անհատական խորհրդատվություն և մշակվել է գործողությունների անհատական պլան՝ ԵՄ շուկա մուտք գործելու համար: Նախապես մշակված անհատական գործողությունների պլանի կատարման որակից և ծավալներից կախված՝ ընտրվել են առավել մրցունակ 5 ՓՄՁ-ներ, որոնց տրվել է անհատական աջակցություն՝ ԵՄ շուկայում նոր գործընկերներ գտնելու և արտադրանքը արտահանելու ուղղությամբ, որը իրականացվելու է ՁԵՑ-ի՝ բիզնեսի միջազգայնացման գործիքների օգնությամբ: Ծրագրի շրջանակներում մշակել՝ նաև ճանապարհային քարտեզ, որը հայկական ՓՄՁ-ների համար կլինի գործուն ուղեցույց ԵՄ շուկա դուրս գալու համար: Ծանապարհային քարտեզը թվայնացվելու է և ինտերակտիվ տեսքով հասանելի է լինելու բոլոր կազմակերպություններին ՓՄՁ ԶԱԿ-ի պաշտոնական կայք էջում:

Ծրագիրն ավարտվել է սույն թվականի օգոստոսի 31-ին:

**գ) Առևտրի միջազգային կենտրոն-Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համագործակցություն
«Առևտրի համար պատրաստ» ծրագրի շրջանակներում**

Առևտրի միջազգային կենտրոնը (ԱՄԿ) «Առևտրի համար պատրաստ» ծրագրի իրականացումը սկսել է 2018 թվականի մարտին: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ որպես EU4Business նախաձեռնության մի մաս: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում և Արևելյան գործընկերության այլ երկրներում ՓՄՁ-ների մրցունակությունը, ինչպես նաև ստեղծել կապեր միջազգային և ԵՄ շուկաների հետ:

Առևտրի միջազգային կենտրոնի և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջև 28.03.2018թ. կնքված դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում իրականացվել է հետազոտություն սննդի վերամշակման ոլորտում գործող 67 ՓՄՁ-ների շրջանում: Հիմնվելով հետազոտության արդյունքների, ինչպես նաև ծրագրի սկզբնական փուլում ստացված տեղեկությունների վրա՝ աջակցության համար ընտրվել են հետևյալ արժեշոյթաները՝ վերամշակված միրգ և բանջարեղեն, մրգի և բանջարեղենի չիր, և բուսական թեյ՝ հաշվի առնելով դեպի ԵՄ դրանց արտահանման հնարավորությունները: Հետազոտության արդյունքները Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից նախնական ամփոփվել են հաշվետվության տեսքով և ներկայացվել են ԱՄԿ-ին: Հետազոտության վերաբերյալ վերջնական հաշվետվությունը կիրապարակվի ԱՄԿ-ի կողմից հաջորդ եռամսյակի ընթացքում:

Բացի այդ, Ծրագրի շրջանակներում ՓՄՁ ԶԱԿ-ը նախապատրաստական աշխատանքներ է տանում «ՍԻԱԼ» միջազգային ցուցահանդեսին՝ հայ սննդի ոլորտի գործարարների մասնակցությանն առավելագույնս արդյունավետ կազմակերպելու համար: Այդ նպատակով հայկական ընկերությունների նկարագիրները և համագործակցության հարցումները/առաջարկները տեղադրվել են «ՍԻԱԼ»-ի B2B հարթակում, ինչը հնարավորություն է տալիս նախապես գործարար հանդիպումներ նշանակել ցուցահանդեսի այլ՝ յուրաքանչյուր հայկական ընկերության համար թիրախային մասնակիցների հետ: Ցուցահանդեսին ընդառաջ բոլոր մասնակիցների համար կազմակերպվել է հատուկ ուղղորդման դասընթաց՝ «Արդյունավետ մասնակցություն ցուցահանդեսներին» խորագրով, որը հիմնված է հայկական ՄԳՄԱ մեթոդիկայի, ինչպես նաև նախկին ցուցահանդեսներին մասնակցության փորձի վրա և իրականացվել է ՓՄՁ ԶԱԿ-ի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) հետ համագործակցության շրջանակներում:

«Պեղական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրով «Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պեղական բյուջեից գումար չի հատկացվել:

7. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

2018թ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը շարունակել է աշխատանքներ իրականացնել միջազգային/դոնոր կազմակերպությունների հետ համատեղ արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող ծրագրերի ուղղությամբ:

Առանձին ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները ներկայացվում են ստորև.

ա) ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացնող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից հաստատվել է Ծրագիրը ևս 5 ամսով, ս.թ. օգոստոսի 1-ից մինչև տարեվերջ երկարացնելու առաջարկը, որի ընթացքում հիմնական շեշտը դրվել է դրամաշնորհների, տեխնոլոգիական դասընթացների և ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման վրա: Շուկայում առաջնիվան և բնապահպանական բաղադրիչների շրջանակներում հուլիսի 31-ից հետո հավելյալ գործողություններ չեն նախատեսվել:

Արդյունքում, հնգամյա ծրագիրն ավարտվել է 2018 թվականի դեկտեմբերի 31-ին՝ հաշվետու տարում արձանագրելով հետևյալ արդյունքները.

«Տեղական տնտեսական զարգացում» բաղադրիչ

Հաշվետու ժամանակահատվածում, ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Մեկնարկել և ավարտվել են «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրեր 5 համայնքներում՝ Շիրակի մարզի Գյումրի, Տավուշ մարզի Դիլիջան, Վայոց Ձորի Վայք, Արագածոտն մարզի Աշտարակ և Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքներում (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

Ծրագրի գերակա ոլորտներում (ջերմոցային և սառնարանային տնտեսություններ, հյուրատնային գործունեություն, պանրի, չրերի, պահածոների և մսամթերքի արտադրություն) տրամադրվող տեխնոլոգիական աջակցության շրջանակում իրականացվել են «Հյուրատների կառավարում» թեմայով մեկական դասընթացներ ՀՀ Շիրակի, Տավուշի, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում գործող սկսնակ հյուրատների համար, ինչպես նաև «Սառնարանային տնտեսությունների կառուցում և շահագործում» թեմայով դասընթաց ՀՀ Արմավիրի մարզում գործող սկսնակ գործարարների համար: Դասընթացներին մասնակցել են 71 շահառու :

Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում՝ նյութեր և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով: Դրամաշնորհները տրամադրվում են համաձայն հաստատված ընթացակարգի: Դրամաշնորհի կարող են հավակնել Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրին մասնակցած, ոլորտային աջակցության ծրագրերի կողմից խրախուսվող ոլորտներից որևէ մեկին

համապատասխան առավել իրատեսական գործարար ծրագրեր մշակած և ներկայացրած, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված անհատ ձեռնարկատերերն ու իրավաբանական անձինք: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերից դիմած 25 սկսնակ գործարարի տրամադրվել է դրամաշնորհ:

Հաշվետու ժամանակահատվածում **իրականացված ենթակառուցվածքային ծրագրեր.**

- Տավուշի մարզի Աջաջուր համայնքում գինեգործական-ուսումնասարտադրական կենտրոնի վերակառուցում:
- Արագածոտնի մարզի Ավան գյուղական համայնքի ջրամատակարարման ցանցի վերակառուցում:
- Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի ոռոգման ցանցի կառուցում:
- Կալավան համայնքում տուրիստական կենտրոնի կառուցում:
- Ազատան համայնքում սերմնազտիչ կայանի վերազինում նոր սարքավորումներով:
- Կողբ համայնքում գործող պտուղների/հատապտուղների վերամշակման արտադրամասի վերազինումնոր գույրոշու կաթսայով:

«Շուկայի հասանելիության խթանում» ենթաբաղադրիչի շրջանակներում բազմաթիվ հանդիպումներ են անցկացվել տարբեր մարզերի արտադրողների հետ՝ շուկայավարման կարիքների գնահատման և բրենդավորման հեռանկարները քննարկելու նպատակով:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել սուպերմարկետների ևս մեկ խոշոր ցանցի հետ՝ «3 Սերունդ» հովանոցային ապրանքանիշի ներքո գործող արտադրողներին ցանցում ներկայացնելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտին է հասցվել Կալավանի մարքեթինգային ռազմավարության մշակման նախաձեռնությունը:

«Գյուղական համայնքների բնության պահպանության» բաղադրիչ

Հաշվետու ժամանակահատվածում այս բաղադրիչի շրջանակներում իրականացվել է նախկինում հաստատված ծրագրերի իրականացումը և մոնիթորինգը:

- Բագրատաշեն գյուղական համայնքում կառուցվել է հանրային կանաչ գոտի, որտեղ տեղադրվել են կահավորվել է նստարաններ, աղբամաններ, ինչպես նաև լուսատուներ: Տնկած ծառերը հինգ տարի հետո կդառնան բերքատու ծառեր: Ծրագիրը դիտարկվում է որպես շատ դրական և արդյունավետ:
- Ալավերդի քաղաքում, Աբրրի և Հաղպատ գյուղական համայնքերում տեղադրվել են 40 հատ /0,55 մ³ տարողությամբ/ մետաղական կոշտ կենցաղային թափոնների հավաքման համար նախատեսված աղբամաններ, որոնց շնորհիվ հնարավոր եղավ աջակցել համայնքների աղբահանության իրականացման գործընթացին:

բ) ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիր

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2016թ. դեկտեմբերի 13-ին Եվրոպական Միության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ ստորագրված,

համապատասխանաբար, ԵՄ դրամաշնորհի և ազգային համաֆինանսավորման համաձայնագրերի հիման վրա իրականացնում է «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» (Boosting competitiveness of regional SMEs) ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է «Տարածաշրջանային զարգացման պիլոտային դրամաշնորհային ծրագրի² (Pilot Regional Development Programme (PRDP) – Armenia)» շրջանակներում:

Ծրագրի նախատեսվող տևողությունը 24 ամիս էր, ավարտը նախատեսվում էր ս.թ. դեկտեմբերի 13-ին: Ներկայումս ընթացքի մեջ է Ծրագրի ժամկետի երակարացման գործընթացը և նոր վերջնաժամկտ է առաջարկվել 2019թ. սեպտեմբերի 30-ը: Ժամկետի երակարացումը հիմնականում պայմանավորված է շինարարական աշխատանքների ուշ մեկնարկի հետ:

Ծրագիրն ուղղված է ՓՄՁ-ների մրցունակության աճին և կայուն աշխատատեղերի ստեղծմանը ՀՀ Լոռու, Արմավիրի և Սյունիքի մարզերում:

Ծրագիրն իրականացվում է կոնսորցիումի կողմից: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը գլխավորում է կոնսորցիումը, որին մասնակցում են ևս չորս տեղական կազմակերպություններ. «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ, «Սյուն» ՀԿ:

Ծրագրի բաղադրիչներն են. «Ենթակառուցվածքների զարգացում», «Ձեռնարկատիրության զարգացում», «Զբաղվածության խթանում»:

Ընդհանուր առմամբ Ծրագրի արդյունքում ստեղծվել են ավելի քան 50 կայուն աշխատատեղեր, պետական գրանցում են ստացել 52 նոր ՓՄՁ-ներ, շուրջ 100 ձեռնարկություններ ստացել են բազմակողմանի աջակցություն և գրանցել են մրցունակության աճ (շրջանառության աճ, աշխատատեղերի աճ, նորարարական մոտեցումներ քիզնեսի կազմակերպման և կառավարման հարցերում, նոր արտադրանք/ծառայություն, նոր շուկաներ և այլն):

Ս.թ. փետրվարի 16-ին կայացել է Ծրագրի երկրորդ կառավարման խորհրդի նիստը, որի ընացքում ներկայացվել են Ծրագրի առաջին տարվա կատարված արդյունքները և երկրորդ տարվա գործողությունները:

Բաղադրիչ 1: «Ենթակառուցվածքների զարգացում»

Այս բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Լոռու մարզում **«Ճամփեզրյա կայանի»** կառուցում և գործարկում:

Ճամփեզրյա կայանը տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կառույց է, որը կծառայի որպես՝

- **տեղական ապրանքների/ծառայությունների ուղղակի վաճառքի կետ.** կներկայացվի տեղական ՓՄՁ-ների յուրահատուկ արտադրանքը՝ հատկապես սկսնակներինը, որոնք դեռևս ի վիճակի չեն ներկայանալ մեծ շուկաներում:

² 2015 թվականի հուլիսի 21-ին Եվրոպական Միության (Հայաստանում ԵՄ պատվիրակություն) և ՀՀ Կառավարության (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության), Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) միջև կնքվել է **Պիլոտային տարածաշրջանային զարգացման դրամաշնորհային ծրագրի փոխըմբռնման հուշագիր:**

- **տեղեկատվական կենտրոն այցելուների և զբոսաշրջիկների համար.** տեղեկատվություն կտարածվի մարզի զբոսաշրջային գրավչությունների և ծառայությունների վերաբերյալ:
- **հանգստի և սննդի կետ անցորդների համար.** անցորդները կկարողանան կանգ առնել, օգտվել հանրային ծառայություններից, կատարել գնումներ և հանգստանալ:
- **շուկայավարման/մոնիտորինգի հարթակ և խորհրդատվական կենտրոն տեղական ՓՄՁ-ների համար.** վաճառվող ապրանքների/ծառայությունների վերաբերյալ հաճախորդների կարծիքները կհավաքագրվեն և կփոխանցվեն արտադրողներին՝ վերջիններիս արտադրանքի/ծառայությունների որակի բարելավման նպատակով:

Կայանի կողմից հետագայում կարող են կազմակերպվել նաև տեղական ապրանքների **ցուցահանդեսներ, տոնավաճառներ, փառատոններ, վարպետաց դասեր** և այլ միջոցառումներ՝ տարածաշրջանի գրավչությունները և տեղական արտադրանքը ներկայացնելու և առաջ մղելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են կայանի նախագծման աշխատանքները, շինարարական աշխատանքների մեկնարկել են ս.թ.սեպտեմբերի 26-ին: Ներկայումս ընթանում են շինարարական աշխատանքները:

Համաձայն նախանական գնահատումների շինարարական աշխատանքները կախված եղանակային պայմաններից կավարտվեն 2019թ. գարնանը, բացի այդ Ծրագրով նախատեսվում էր նաև աջակցություն ցուցաբերել կայանի գործարկմանը առաջին չորս ամիսների ընթացքում, ուստի անհրաժեշտություն էր առաջացել դիմել Ծրագրի ժամկետի երկարաձգմանը առնվազ 9 ամսով, միայն սույն բաղադրիչի իրականացման մասով:

Շինարարական աշխատանքներին զուգահեռ կմշակվի Կայանի գործարկման ուղեցույցը, մրցութային կարգով կընտրվի օպերատոր, որին Կայանը կհանձնվի կառավարման, կընտրվեն ՓՄՁ-ներ, որոնց ապրանքները և ծառայությունները պետք է ներկայացվեն կայանում: Կայանի գործարկումը նախատեսվում է 2019թ. մայիս-հունիս ամիսներին:

Բաղադրիչ 2: «Ձեռնարկատիրության զարգացում»

Ծրագրի առաջնահերթություններից է տեղի **ակտիվ երիտասարդների և կանանց** ձեռնարկատիրական կարողությունների զարգացումը: «Հաջող սկիզբ» ծրագրերի միջոցով աջակցություն կցուցաբերվի **սկսնակ գործարարներին՝** իրենց գաղափարների կյանքի կոչման ճանապարհին: Ծրագրին կմասնակցեն շուրջ 270 սկսնակներ: **Գործող 100 ՓՄՁ-ները** կստանան բիզնեսի զարգացման ծառայություններ՝ նրանց մրցունակության և աշխատատեղերի ստեղծման կարողությունների զարգացման նպատակով: Կարողությունների զարգացման միջոցառումներ կիրականացվեն նաև տեղական իշխանությունների և բիզնես ծառայություններ մատուցող տեղական կազմակերպությունների համար՝ տեղական տնտեսական զարգացման և հատկապես ՓՄՁ աջակցության ծրագրերի մշակման և իրականացման հարցերում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- *Դասընթացներ ՓՄՁ-ների համար:*

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են 15 գործարար դասընթացներ ՀՀ Լոռու, Սյունիք, Արմավիրի ՓՄՁ-ների համար: Դասընթացներին մասնակցել են 274 ՓՄՁ-ի ներկայացուցիչներ (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

- *Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության «Հաջող սկիզբ» ծրագրերի իրականացում:*

Իրականացվել են ս.թ. ապրիլ ամսից մեկնարկող սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության «Հաջող սկիզբ» 9 ծրագրեր՝ երեքական յուրաքանչյուր թիրախային մարզում:

Ծրագրի միջոցով աջակցություն է ցուցաբերվում սկսնակ գործարարներին՝ իրենց գաղափարների կյանքի կոչման ճանապարհին:

Ընդհանուր առմամբ նշված ծրագրերին մասնակցել են 119 սկսնակ գործարարներ, որոնցից 105-ը մշակվել է իր գործարար ծրագիրը: Արդյունքում արդեն իսկ պետական գրանցում է ստացել 35 նոր ՓՄՁ սուբյեկտ (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում): Առավել հաջողված և կենսունակ ծրագրերը հնարավորություն ունեն դիմելու սույն Ծրագրի շրջանակներում նախատեսվող ենթադրամաշնորհներին՝ նոր աշխատատեղ ստեղծելու համար, ինչպես նաև կներկայացվեն ֆինանսավորման Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի սկսնակներին վարկային երաշխավորությունների տրամադրման մեխանիզմով: Ընդհանուր առմամբ նշված ծրագրերի մասնակիցներից ֆինանսական աջակցության են ներկայացվել ավելի քան 30 գործարարներ, որոնցից 24-ը ստացել են նաև դրամաշնորհ:

- *Շուկայի հասանելիության ծառայությունների փաթեթներ տրամադրում (գործողությունն իրականացվում է Ծրագրի գործընկեր «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից):*

Ծրագրի շրջանակներում հիմնվելով շուկայի հետազոտության ու ՓՄՁ-ների կարիքների գնահատման արդյունքների վրա՝ մշակվել են ծառայությունների հինգ հետևյալ ուղղություններ. վեբ կայքի պատրաստում, սոցիալական մարքեթինգ և թվային մարքեթինգ, բրենդինգ և դիզայն, տպագրություն և արտաքին գովազդ: Հաշվետու ժամանակահատվածում ստեղծվել է թիրախային ՓՄՁ-ների տվյալների բազա, եւ սահմանվել են մատուցվող ծառայությունների հիմնական ուղղությունները ըստ անհատական գնահատված կարիքների: Ընթացքի մեջ են ծառայությունների փաթեթների տրամադրումը շուրջ 100 ՓՄՁ-ների:

Բացի վերը նշված մասնագիտացված ծառայություններից Ծրագրի շահառուներին տրամադրվում են հետևյալ խորհրդատվական ծառայությունները

- ընկերության ռազմավարական նպատակների սահմանում,
- մարքեթինգ (խթանման ռազմավարություն, ապրանքի դիզայնի եւ փաթեթավորման բարելավում, սպասարկման որակի բարձրացում և այլն),
- կառավարում (արդյունավետ HR, աշխատուժի հմտությունների կատարելագործում, աշխատողների մոտիվացիա եւ այլն),
- սննդամթերքի անվտանգություն (սննդամթերքի անվտանգության նորմերի պահպանում),
- արտադրական սարքավորումների ընտրություն,
- ներդրումային եւ բիզնես պլանավորում, և այլն:

Բաղադրիչ 3: «Զբաղվածության խթանում»

Ծրագրի շրջանակներում **վերապատրաստման դասընթացներ** կկազմակերպվեն շուրջ 210 աշխատանք փնտրողների համար, **փորձի փոխանակման միջոցառումներ** կիրականացվեն առնվազն 45 աշխատանք փնտրողների համար: Թիրախային **ենթադրամաշնորհները** հասանելի կլինեն այն փոքր և միջին ձեռնարկություններին, որոնք կստեղծեն նոր կայուն աշխատատեղեր (նախնական ընտրությունը կիրականացվի «Հաջող սկիզբ» ծրագրերի հաջողված շահառուներից): Դրամաշնորհների արդյունքում կստեղծվի առնվազն 25 կայուն աշխատատեղեր (մեկ նոր աշխատատեղի ստեղծման համար դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 2 մլն ՀՀ դրամ):

Բաղադրիչի շրջանակներում Զբաղվածության պետական գործակալության հետ սերտ համագործակցությամբ կկազմակերպվեն նաև **աշխատանքի տոնավաճառներ**, որտեղ կհանդիպեն գործատուները և աշխատանք փնտրողները: Կկազմակերպվեն երեք աշխատաքային տոնավաճառներ՝ մեկական յուրաքանչյուր թիրախային մարզում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- *Վերապատրաստման դասընթացներ և փորձի փոխանակման միջոցառումներ տեղական աշխատուժի համար (գործողությունն իրականացվել է Ծրագրի մարզային գործընկեր կազմակերպությունների կողմից):*

Կազմակերպվել են 12 վերապատրաստման դասընթացներ տեղական աշխատուժի համար և 45 փորձի փոխանակման միջոցառումներ:

- *Ենթադրամաշնորհների տրամադրում:*

Ծրագրի կառավարման խորհրդի կողմից հաստատվել են արդեն իսկ տրամադրվել են 24 դրամաշնորհային ծրագրեր, ևս 5-ի դրամաշնորհային հայտերը գտնվում են քննարման փուլում: Ընթացքի մեջ են դրամաշնորհներով նախատեսված աշխատանքների կատարումը:

- *Աշխատանքի տոնավաճառների կազմակերպում:*

Ծրագրի աջակցությամբ Զբաղվածության պետական գործակալությանը Ծրագրի թիրախային երեք վայրերում կազմակերպվել են աշխատանքային տոնավաճառներ, որոնց նպատակն է միաժամանակ մեծ թվով գործատուների և աշխատանք փնտրողների հանդիպումն ապահովելու միջոցով իրականացնել երկկողմանի աջակցություն: ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում տոնավաճառը կայացել է ս.թ. սեպտեմբերի 27-ին, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում՝ հոկտեմբերի 5-ին և ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում՝ հոկտեմբերի 10-ին: Տոնավաճառներին ընդհանուր առմամբ շուրջ 100 գործատուներ ներկայացրել են իրենց թափուր աշխատատեղերի պահանջը, որոնց այցելել են ավելի քան 3000 աշխատանք փնտրողներ:

գ) «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում – փուլ - 2» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր

2016թ. հուլիսի 18-ից մեկնարկել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում – փուլ 2» ծրագիրը, որը հանդիսանում է 2013 -2016 թթ. իրականացված

«Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում» ծրագրի շարունակությունը:

Ծրագրի «փուլ 2»-ը ուղղված է Ծրագրի նախորդ փուլի իրականացման ընթացքում ստեղծված դրական արդյունքների և ազդեցությունների տարածմանն ամբողջ երկրում՝ ավելի ընդարձակ առաջադրանքներով, ինչպիսիք են արտահանման ու զբոսաշրջության առաջնորդումը/խթանումը տեղական ու միջազգային շուկաներում:

Ծրագրի հիմնական գործողությունները ներառում են .

- Հայ փորձագետների կարողությունների զարգացում,
- Տեխնիկական աջակցության ցուցաբերում աճի ներուժ ունեցող ՓՄՁ-ներին,
- Հայկական տեղական ապրանքերի առաջնորդում միջազգային շուկաներում,
- Ծրագրի փորձնական իրականացման վայրերի վերաբերյալ զբոսաշրջային փաթեթների առաջնորդում տեղական և միջազգային շուկաների համար,
- Շուկայավարման հարթակների ձևավորում՝ տեղական ապրանքերի և ծառայությունների ներկայացման նպատակով,
- մոնիտորինգ և տեղեկատվության կուտակում՝ տվյալների բազայի ստեղծման միջոցով:

Արտահանման խթանմանն ուղղված գործողությունների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում ծրագրի աջակցությամբ սննդի և խմիչքների արտադրության ոլորտի մարզային 6 ՓՄՁ-ներ իրենց մոտ 20 անուն ապրանքները (կոմպոտներ, գինիներ, թեյեր, բանջարեղենային պահածոներ, մուրաբաներ և չրեր) ներկայացրել են ս . թ . մարտի 6-9-ը Տոկիոյում (Ճապոնիա) կայացած FOOD EX JAPAN 2018 և FOOD AND HOTEL ASIA 2018 (Սինգապուր) սննդի խոշոր միջազգային ցուցահանդեսին: Վերոնշյալ ոլորտի ևս 3 մարզային ՓՄՁ-ների 6 անուն ապրանքատեսակներ (մեղրահաց, գինի, չրեր) ներկայացվել է Ծրագրի փորձագիտական թիմի կողմից: Այս գործողությունների շրջանակում Ծրագրի թիմը շարունակում է հետևման աշխատանքներ տանել վերոնշյալ ցուցահանդեսների մասնակից տեղական ՓՄՁ-ների հետ՝ ցուցահանդեսներին մասնակցության արդյունքների գնահատման և ՓՄՁ-ների շարունակական բարելավման մշտադիտարկման նպատակով:

Այս գործողության շրջանակում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է դասընթացներ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի որոշ աշխատակիցների համար՝

ա) արտահանման խթանմանն ուղղված աշխատանքների հիմնական բովանդակության և այդ գործընթացում նրանց դերի ներկայացման նպատակով,

բ) պոտենցիալ արտահանողների համար նախատեսված խորացված ՄԳՄԱ մեթոդների վերաբերյալ (միջազգային շուկայավարում)

Միջազգային ցուցահանդեսներում արդյունավետ մասնակցություն ապահովելու նպատակով Ծրագրի կողմից իրականացվել են կարողությունների զարգացման դասընթացներ «Խորացված ՄԳՄԱ մեթոդներ – միջազգային առևտրային ցուցահանդեսներին արդյունավետ մասնակցություն» թեմայով «Միջազգային առևտրի կենտրոն»(ITC), «Բիզնես Արմենիա» և Ավստրիական զարգացման գործակալության ՕԳԱՆ (Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն) ծրագրերի

ընդհանուր 22 ՓՄՁ-ների համար (ցուցահանդեսները՝ SIAL PARIS 2018 և MENOPE DUBAI 2018):

ՕԳԱՆ ծրագրի 9 շահառուների տեղում փորձագիտական աջակցություն է տրամադրվել նաև MENOPE DUBAI 2018 ցուցահանդեսի ընթացքում:

Տեղական զբոսաշրջության խթանման գործողությունների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել ս.թ. սեպտեմբերի 20-23-ը Տոկիոյում (Ճապոնիա) կայացած TOURISM EXPO JAPAN 2018 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսում Հայաստանի զբոսաշրջության պետական կոմիտեի և Զբոսաշրջության զարգացման հիմնադրամի հետ համատեղ միասնական տաղավարում Հայաստանի ներկայացման ուղղությամբ: Ծրագրի և Հայաստանի Զբոսաշրջության զարգացման հիմնադրամի աջակցությամբ մեկ միասնական տաղավարով Հայաստանը ներկայացվել է 7 զբոսաշրջային կազմակերպությունների միջոցով: Կազմակերպությունների ընտրության նպատակով Հայաստանի զբոսաշրջության պետական կոմիտեի և Զբոսաշրջության զարգացման հիմնադրամի աջակցությամբ էլեկտրոնային փոստի միջոցով հրավերք է ուղարկվել ոլորտի 400 կազմակերպությունների: Հրավերքը տարածվել է նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ և Ծրագրի ֆեյսբուքյան պաշտոնական էջերի միջոցով (ընդհանուր 6700+ հետևողներ): Մասնակցության հայտեր են ներկայացրել 10 կազմակերպություն, որոնցից 5-ին ծրագրի փորձագիտական խումբն ընտրել է մասնակցելու ցուցահանդեսին և Ճապոնիայում կայանալիք վերապատրաստման դասընթացին: Եվս 2 կազմակերպություն ներկայացվել են ՀՀԶԿ-ի կողմից՝ միայն ցուցահանդեսին մասնակցելու նպատակով: Ընտրված կազմակերպությունների հետ Ծրագրի թիմը շարունակել է աշխատել՝ նրանց առաջարկները ճապոնական շուկայի պահանջներին համապատասխան և ավելի գրավիչ դարձնելու ուղղությամբ:

Այս գործողության շրջանակում Ծրագրի թիմը մշակել և հրատարակել է նաև ճապոներեն լեզվով Հայաստանը ներկայացնող զբոսաշրջային կատալոգ: Այս կատալոգն օգտագործվել է ինչպես ցուցահանդեսի ընթացքում, այնպես էլ հետագայում Ճապոնիայում Հայաստանը որպես գրավիչ զբոսաշրջային ուղղության ներկայացնելու նպատակով:

Ծրագրի մեկնարկից սկսված հետազոտական աշխատանքներ են իրականացվում ՀՀ Լոռու և Սյունիքի մարզերում ճամփեգրյա կայանների հիմնման գործողությունների շրջանակում: Հաշվետու ժամանակահատվածում ավարտին է հասցվել ճամփեգրյա կայանի գործառնական պլանի և Լոռու մարզում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ- ԵՄ համատեղ «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակում կառուցվելիք ճամփեգրյա կայանի ապրանքանշման ուղեցույցի (brandbook) մշակման աշխատանքները:

Ս.թ. փետրվարի 27-ից մարտի 14-ը Ճապոնիայում իրականացվել է վերապատրաստման դասընթաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ աշխատակիցների և FOOD EX JAPAN 2018 ցուցահանդեսի մասնակից սննդի և խմիչքների արտադրության ոլորտի մարզային 3 ՓՄՁ-ների ներկայացուցիչների համար: Դասընթացը կազմակերպվել է՝ նպատակ ունենալով գործնականում տեսնել և իրականացնել միջազգային ցուցահանդեսի մասնակցությունը, արտահանման խթանումը, ծանոթանալ ճամփեգրյա կայանների գործարկմանը և ճապոնական արտադրողների կողմից ընդունված որակի և հիգիենայի

արդյունավետ կառավարման համակարգերը, գինու և չրերի ճապոնական շուկայի ներկա իրավիճակը և այլն:

Ս.թ. ապրիլի 18-ից մայիսի 2-ը Սինգապուրում իրականացվել է վերապատրաստման դասընթաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ աշխատակիցների և և FOOD AND HOTEL ASIA 2018 ցուցահանդեսի մասնակից սննդի և խմիչքների արտադրության ոլորտի մարզային 3 ՓՄՁ-ների ներկայացուցիչների համար: Դասընթացը կազմակերպվել է՝ նպատակ ունենալով գործնականում տեսնել և իրականացնել միջազգային ցուցահանդեսի մասնակցությունը, արտահանման խթանումը, ծանոթանալ Սինգապուրի և հարևան երկրների սննդի շուկաներում ներկա իրավիճակին և պահանջներն, ինչպես նաև հանդիպումներ իրականացնել Սինգապուրում ՓՄՁ-ներին աջակցող մարմինների հետ՝ հետագա համագործակցության հաստատման հնարավորությունների քննարկման նպատակով:

Ս.թ. սեպտեմբերի 11-28-ը Ճապոնիայում իրականացվել է վերապատրաստման դասընթաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ աշխատակիցների և TOURISM EXPO JAPAN 2018 ցուցահանդեսի մասնակից 5 ՓՄՁ ներկայացուցիչների համար: Դասընթացը կազմակերպվել է նպատակ ունենալով գործնականում տեսնել և մասնակցել միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի, ծանոթանալ ճապոնական զբոսաշրջային շուկայի պահանջներին և նախասիրություններին, ինչպես նաև ծանոթանալ Ճապոնիայում զբոսաշրջային ծառայությունների մատուցման փորձին:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի աջակցությամբ 9 մարզային ՓՄՁ սուբյեկտներ մասնակցել են ս. թ. սեպտեմբերի 15-ին Երևանի Մանկական զբոսայգում կայացած Բերքի Փառատոնին: Մինչև փառատոնը նշված ՓՄՁ-ների համար կազմակերպվել է դասընթաց՝ միջոցառումներին արդյունավետ ցուցադրություն կազմակերպելու և միջոցառումների միջոցով շուկայի ուսումնասիրություն կազմակերպելու վերաբերյալ: Ստացված գիտելիքները փորձարկվել և ամրապնդվել են Փառատոնի ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի փորձագիտական թիմի կողմից մշակվել և վերջնականացվել է խորացված ՄԳՄԱ մեթոդին վերաբերող 9 անուն կրթական նյութեր, ուղեցույցներ և ձեռնարկներ, որոնք կիրատարակվեն հաջորդ տարվա սկզբին:

Սննդի պետական անվտանգության ծառայության հետ համատեղ մշակվել է և հրատարակվել է «Տնտեսվարողի ուղեցույցը», որը նախատեսվում է տարածել սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ՓՄՁ-ների և սկսնակ գործարարների շրջանակում:

դ) «Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիր

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը որպես գործընկեր կազմակերպություն մասնակցում է ԵՄ կողմից ֆինասավորվող «Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագրին (Ծրագիր): ERASMUS ծրագրին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հնարավորություն ունեցավ դիմելու COSME ծրագրին Հայաստանի անդամակցության շնորհիվ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը Ծրագրին մասնակցում է 9 երկրներից ներկայացված և 10 կազմակերպություններից բաղկացած կոնսորցիումով: Կոնսորցիումի համակարգող կազմակերպությունն է Տերասսայի առևտրաարդյունաբերական պալատը (Իսպանիա), իսկ գործընկեր կազմակերպություններն են՝ Օվիեդոյի առևտրաարդյունաբերական

պալատը (Իսպանիա), Լեհաստանի Ձեռնարկությունների Չարգացման Գործակալությունը (Լեհաստան), Կրթության և Նորամուծությունների Կենտրոնը (Սլովակիա), Բողզենի Նորամուծությունների Կենտրոնը (Գերմանիա), OXALIS ձեռնարկատերերի միությունը (Ֆրանսիա), Վեզպրեմի առևտրի պալատը (Հունգարիա), Թուրինի առևտրաարդյունաբերական պալատ (Իտալիա), Ֆլանդրիայի առևտրաարդյունաբերական պալատը (Բելգիա) և Հայաստանի ՓՄՁ զարգացման կենտրոնը (Հայաստան):

Ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդ ձեռներեցների ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը, մրցունակության բարձրացմանը՝ արտերկրյա համանման ոլորտում գործող փորձառու կազմակերպությունների հետ փորձի փոխանակման և գործնական կապերի հաստատման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 16 հայաստանյան գործարարների փորձի փոխանակում եվրոպական համանման կազմակերպությունների հետ:

Ծրագրի առաջին փուլը մեկնարկել է 2017թ. փետրվարի 1-ից՝ 24 ամիս ժամկետով: Ծրագրի բյուջեն կազմում է 123,900 եվրո:

Ս.թ. դեկտեմբեր ամսին հաստատվել է Ծրագրի 2-րդ փուլը, որը կմեկնարկի 2019 թվականի փետրվարի 1-ից 36 ամիս ժամկետով: Ծրագրի 2-րդ փուլի բյուջեն կազմում է 227,881 եվրո:

Առ 31.12.2018թ. Ցանցում գրանցված են Ծրագրի պոտենցիալ 33 մասնակիցներ, որոնցից 28-ը՝ որպես Նոր ձեռնարկատեր, իսկ 5-ը՝ որպես Հյուրընկալող Ձեռնարկատեր:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է հայաստանյան 16 նոր սկսնակ ձեռնարկատերերի փորձի փոխանակումը, ինչպես նաև ընթացքում է 3 նոր ձեռնարկատեր փորձի փոխանակման գործընթացը: Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է Բելգիայից ժամանած նոր ձեռնարկատիրոջ փորձի փոխանակումը հայաստանյան հյուրընկալող ձեռնարկատիրոջ մոտ (Ավիդա Լոգիստիք ՍՊԸ):

Ավարտված ծրագրերի հաջողված պատմությունները ներկայացվել են հաստատման Ծրագիրը համակարգող կազմակերպությանը (EASME), որոնք հավանության արժանանալու դեպքում կիրառարակվեն Ծրագրի <https://www.erasmus-entrepreneurs.eu/> կայքէջում: Ի դեպ, Ծրագիրը համակարգող կազմակերպությանը (EASME) կողմից արդեն իսկ կիրառարակվել է հայաստանյան 1 Նոր ձեռնարկատիրոջ հաջողված պատմությունը:

Ս.թ. նոյեմբերի 29-ին Իսպանիայի Սան Կուգատ քաղաքում Ծրագրի շրջանավարտներ Նելլի Դավթյանը, Արմեն Մխիթարյանը և Սարգիս Ավետյանը մասնակցեցին "Լավագույն շրջանավարտների" հանդիպմանը:

Ծրագրի 5 մասնակիցներ հայտ են ներկայացրել 2019 թ. մարտ ամսին Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար ծրագրի 10-ամյակի կապակցությամբ կազմակերպվելիք «Լավագույն ձեռնարկատեր» մրցանակաբաշխությանը: Մրցանակաբաշխությանը հայտեր են ներկայացրել Ծրագրի ողջ ընթացքի բոլոր եվրոպական երկրներից շրջանավարտները: Արդյունքում, Ծրագրի հայաստանյան մասնակից Նելլի Դավթյանը 19 այլ մասնակցների հետ դուրս է եկել կիսաեզրափակիչ փուլ: Եզրափակիչ փուլին կմասնակցեն 6 ձեռնարկատերեր՝ 3 նոր և 3 հյուրընկալող, որոնց անունները կիրառարակվեն 2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

Մրցանակաբաշխության Եզրափակիչ փուլը տեղի կունենա 2019 թվականի մարտի 18-ին: Մրցանակաբաշխությանը հայտ ներկայացրած ևս 2 մասնակցների պատմությունները կհրապարակվի Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար ծրագրի 10 տարիների «Լավագույն ձեռնարկատերեր» գրքույկում:

8. «Պեղական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանը «Պեղական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրով» նախատեսված 152,600,000 ՀՀ դրամից 2018 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից ուղղվել է 147,500,000 ՀՀ դրամ: